



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 դեկտեմբերի 2017 թվականի թիվ 210- Ա

ՄԱՐԻՆԵ ՀՐԱԶԻԿԻ ՄԵԶԻՆՅԱՆԻՆ ՀՀ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻԶԱՆԻ ԹԻՎ.2
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 21-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 34-րդ կետով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2017թ. դեկտեմբերի 15-ի թիվ 5 նիստի արձանագրությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցչի եզրակացությունը և Մ.Մեջինյանի դիմումը՝

ո Ր Ո Շ ՈՒ Մ եմ.

1.Մարինե Հրաչիկի Մեջինյանին 2017 թվականի դեկտեմբերի 19-ից նշանակել «ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում, կնքել աշխատանքային պայմանագիր և լուծել Մ.Մեջինյանի հետ 2017թ. օգոստոսի 21-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ԱՐՈՎՅԱՆ

2017թ.դեկտեմբերի 19
ք. Իջևան

